



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ**

**ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖՈՒԾԻԱՆԻ ԹԱՆԳԱՐԱՆ**

ՀԱՅ-ՉԻՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

**«ՄԵՏԱՔՄԻ ԵՎ ԹԵՅԻ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԴԵՐՆ ՈՒ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ
ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԵՎ ԵՐԿՐՆԵՐԻ
ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎՐԱ»**

**ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ-ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ՝
ՆՎԻՐՎԱԾ «ԳՈՏԻ ԵՎ ՃԱՆԱՊԱՐՀ» ՉԻՆԱԿԱՆ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅԱՆ
10-ԱՄՅԱԿԻՆ**



ՕԳՈՍՏՈՍԻ 8-9, 2023, ԵՐԵՎԱՆ

ՀԱՄԱՌՈՏ ԱՎՆԱՐԿ

«Գոտի և ճանապարհը» կամ «Նոր Մետաքսի ճանապարհը» Չինաստանի կառավարության կողմից 2013թ-ին ընդունված նախաձեռնությունն է, որն ուղղված է ենթակառուցվածքների զարգացմանը, առևտրի խթանմանը և ներդրումներին: Այն նպատակ ունի խորացնել առևտրատնտեսական և մշակութային կապերը Չինաստանի և նախաձեռնությանը անդամակցած երկրների միջև, որոնց թիվը հասել է 140-ը:

...երբ տարիներ առաջ արժարծվեց «Մետաքսի ճանապարհի» վերականգնման գաղափարը, Չինաստանը կարևորում էր այդ պատմական ճանապարհի պատմական ուղով գծումը:

Ուստի, Հայաստանը անքակտ կապված է այս ճանապարհի հետ. «Մետաքսի ճանապարհի» մի հատվածն Իրանի հյուսիսային շրջաններից ձգվում էր Արաքսի հովիտը՝ Ջուղայի գետանցով դեպի Նախիջևան և Արտաշատ, այնտեղից՝ Սև ծովի նավահանգիստներ և Եվրոպա: Սկսած 17-րդ դարի կեսերից՝ չինական «Թեյի ճանապարհը» գործել է մոտ երեք դար՝ տարածվելով ողջ Եվրասիա մայրցամաքում: Ինչպես Մետաքսի ճանապարհը, այն նույնպես զգալի դերակատարություն է ունեցել մշակույթի, պատմության և առևտրի բնագավառում: Չինական աղբյուրների համաձայն, «Թեյի ճանապարհի» ամենահին երթուղիներից մեկը սկսվել է Միմեյ գյուղից, որը գտնվում է Վույ լեռան ստորոտում և անցել է Մոնղոլիայով, Իրանով, Հայաստանով և, հատելով Կովկասյան լեռները, հասել է մինչև Մոսկվա:

Այսպիսով, Արևելքն Արևմուտքին կապող այս ուղիները միայն տնտեսական չէին, այլև՝ մշակութային...

«ԾՈՎԱՅԻՆ ՄԵՏԱՔՄԻ ՃԱՆԱՊԱՐՀ. ՑՈՒ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՄՇԱԿՈՒԹՅԱՅԻՆ ՄԱՍՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ՑՈՒՑԱՀԱՆՂԵՄ»

Ծովային Մետաքսի ճանապարհը խաղաղության ճանապարհ էր, որը կապում էր Արևելքի և Արևմուտքի հին քաղաքակրթությունները առևտրի, մշակույթի և արվեստի փոխանակման միջոցով: Այն ձգվում էր Արևելյան Ասիա, Հարավարևելյան Ասիա, Հարավային Ասիա, Առաջավոր Ասիա, Աֆրիկայի արևելք և վերջապես Կարմիր ծովով

հասնում Եվրոպա՝ միացնելով ճանապարհի երկայնքով գտնվող բազմաթիվ նավահանգիստներ:

Չինաստանի, Հնդկաստանի, Արաբիայի, Եգիպտոսի, Հոնոլի, Հունաստանի և այլ երկրների բոլոր առևտրականները օգտվում էին այս ծովային առևտրի ճանապարհից: Փոխանակվող ապրանքները հիմնականում խեցեղեն էին, մետաքս, թեյ, համեմունքներ, այդ պատճառով ծովային Մետաքսի ճանապարհը կոչվում էր նաև «Խեցեղենի ճանապարհ», «Համեմունքների ճանապարհ» և այլն:

2014թ. մայիսին «Ծովային Մետաքսի ճանապարհ. յոթ նահանգների մշակութային մասունքների համատեղ ցուցահանդեսը» Չինաստանի շուրջ 20,000 թանգարանային ցուցահանդեսներից զբաղեցրեց երրորդ տեղը՝ արժանանալով «Լավագույն տաս ցուցահանդես» մրցանակին:

Ցուցահանդեսի հետքերով.

2013թ. – Ֆուճոու, Ֆուժիան նահանգ:

2014թ. – Պեկին, Ջինան (Շանդուն նահանգ), Շենժեն (Գուանդուն նահանգ), Սան Պաուլո (Բրազիլիա), Սիդնեյ (Ավստրալիա), Լոնդոն (Միացյալ Թագավորություն), Նյու Յորքում ՄԱԿ-ի կենտրոնակայան (ԱՄՆ):

2015թ. – Բանգկոկ (Թաիլանդ), Ջակարտա (Ինդոնեզիայի Հանրապետություն), Գուանսի նահանգ, Սյամեն, Տյանցզին, Հայնան նահանգ, Հոնկոնգ, Մակաո:

2016թ. – 2016. Սինցյան նահանգ, Յզյանսու նահանգ, Չժեցզյան նահանգ, Գուանդուն նահանգ, Գելդերլանդ նահանգ (Նիդերլանդներ), Լիեժ նահանգ (Բելգիայի Թագավորություն), Աթենք (Հունաստան), Դուբրովնիկ (Խորվաթիա), Ստոկհոլմ (Շվեդիա):

2017թ. – Վիեննա, Ավստրիա, Պոսադաս (Արգենտինա), Սան Պաուլո (Բրազիլիա), Սանտյագո (Չիլի):

2018թ. – Վալետա (Մալթա):

2019թ. – Ռեյկյավիկ (Իսլանդիա), Կոպենհագեն (Դանիա):

2023թ. – Երևան (Հայաստանի Հանրապետություն):

ՀԱՄԱՌՈՏ՝ ՖՈՒԾԻԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ

Ֆուժիան թանգարանը գտնվում է Հարավարևելյան Չինաստանի Ֆուժիան նահանգի վարչական կենտրոն Ֆուչժոու քաղաքի Արևմտյան լճի այգում: Հիմնադրումից ի վեր (1933թ.) ճանաչվել է ազգային թանգարան: Թանգարանի նորակառույց շենքը, որը կառուցվել է 2002թ., զբաղեցնում է 36000քմ. տարածք: Այստեղ ցուցադրվում է ավելի քան 280,000 նմուշներից բաղկացած հավաքածու, որից 30,000-ը բարձրարժեք մշակութային մասունքներ են: Այն Չինաստանի վեցը մեկում համապարփակ թանգարանային համլիրի մի մաս է, որի կազմում գործում են Բնագիտական կենտրոնը, Ծիցուեյուան արվեստի հիմնադրամը, Հնագիտության ինստիտուտը, Մշակութային մասունքների պահպանման կենտրոնը և Ստորջրյա հնագիտության ազգային հետզոտական բազան: Ֆուժիան թանգարանն ունի յոթ մշտական և ավելի քան 30 ժամանակավոր ցուցադրություն, որոնք ընդգրկում են թեմաների լայն շրջանակ: Դրանց թվում են Հին Ֆուժիանի հիանալի քաղաքակրթությունը, Մետաքսի ծովային ճանապարհի շքեղությունը, Ֆուժիան օպերայի ճոխությունը, Հազվագյուտ արհեստները, Հնագիտական հետազոտության արդյունքները, Բնական աշխարհը և Դինոզավրերի աշխարհը:

2015թ. Ֆուժիանի թանգարանը միակ պետական թանգարանն էր, որը Չինաստանի թանգարանների ասոցիացիայի կողմից ընտրվել էր ամենանորարար թանգարանների մրցանակի հավակնորդ: Դառնալով միակ մրցանակակիրը՝ թանգարանը նվիրվել է ցուցահանդեսների կազմակերպմանը և իրականացմանը, բարձրորակ ծառայությունների մատուցմանը և բրենդային քաղաքականության զարգացման ստեղծմանը, ակադեմիական հետազոտություններին, վարչական կառավարմանը և միասնական, ստեղծագործ համակարգի ձևավորմանը:

2016թ. Ֆուժիան թանգարանը հրավիրվել է Դուբայում հիմնականում անցկացվող միջազգային ամենամյա համաժողովին՝ ներկայացնելու թանգարանի ժառանգության և պահպանության ոլորտում ամենանորարար, ոգեշնչող և մրցանակների արժանացած նախագծերը: Ֆուժիան թանգարանը հաղթել է 2016թ. «Ազդեցիկ նախագծերի լավագույն ժառանգություն» անվանակարգում և դարձել Գերազանցության ակումբի անդամ:

ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ԹԵՄԱՆԵՐԸ

- *Երկրաբանություն*
- *Պատմագիտություն*
- *Թանգարանագիտություն*
- *Երկրագիտություն*
- *Հնագիտություն*
- *Մշակութաբանություն*
- *Արվեստագիտություն*
- *Աշխարհագիտություն*

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ՝
ՀՀ, ք. Երևան, Մ. Բաղրամյան 24ա

- ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճ
- ՀՀ ԳԱԱ նախագահության շենքի ճեմասրահ
- ԵԳԻ Հ.Կարապետյանի անվ. Երկրաբանական թանգարան



Հարցերի դեպքում դիմել կազմակուրսին.

Գայանե Գրիգորյան – բջջ.՝ 093647009

Արմեն Մխիթարյան – բջջ.՝ 044255007

Մեղա Ավագյան – բջջ.՝ 094775980

Էլ.-փոստ՝ armgeomuseum@gmail.com

Մասնակցության համար գրանցման հղում՝

https://docs.google.com/forms/d/e/1FAIpQLSfgv404ZOzUaLv15G5-qu8MdLYUOyh70_TjCRNFkxMcpBB6NQ/viewform?usp=sf_link

ԿԱՐԵՎՈՐ ԱՄՍԱԹՎԵՐ

20 հուլիս, 2023 – հայտերի և թեզիսների ընդունման վերջնաժամկետ

25 հուլիս, 2023 – հայտերի և թեզիսների ընդունման վերաբերյալ հաստատում

1 օգոստոս, 2023 – թեզիսների սահիկաշարերի ընդունման վերջնաժամկետ

8 օգոստոս, 2023 – գիտաժողով-ցուցահանդեսի բացում, հանդիսավոր նիստ, էքսկուրսիաներ

9 օգոստոս, 2023 – զեկուցումներ

ԷՔՍԿՈՒՐՍԻԱՆԵՐ

Գիտաժողովի առաջին օրը նախատեսվում է էքսկուրսիաների կազմակերպում, որոնց ուղղությունը կամ ուղղությունները քննարկման փուլում են, ինչպես նաև կախված են եղանակային պայմաններից և մասնակիցների քանակից:

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿ

1. ՀՀ ՏԿԵ նախարարություն
2. ՀՀ ՇՄ նախարարություն
3. ՀՀ ԿԳՄՍ նախարարություն

4. ՀՀ ԳԱԱ Երկրաբանական Գիտությունների Ինստիտուտ
5. Հայ-Չինական գործընկերության կենտրոն
6. ՉԺՀ Ֆուժիան գավառի Մշակութային Ժառանգության Բյուրո
7. ՉԺՀ Ֆուժիանի թանգարան
8. ՀՀ ԳԱԱ ԵԳԻ Հ. Կարապետյանի անվան երկրաբանական թանգարան
9. Մարդարապատի հերոսամարտի հուշահամալիր, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան
10. Եդեգնաձորի երկրագիտական թանգարան
11. ՀՀ Պատմության թանգարան
12. Էրեբունի պատմահնագիտական արգելոց-թանգարան
13. Երևան քաղաքի պատմության թանգարան
14. Մատենադարան- Մ.Մաշտոցի անվ. հին ձեռագրերի ԳՀԻ
15. Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի հուշարձանների պահպանության ծառայություն
16. ՀՀ ԳԱԱ Հնագիտության Ինստիտուտ
17. ՀՀ ԳԱԱ Պատմության Ինստիտուտ
18. ՀՀ ԳԱԱ Արվեստի Ինստիտուտ
19. Երևանի Պետական Համալսարան
20. Հայաստանի Ազգային Պոլիտեխնիկական Համալսարան
21. Հայաստանի Պետական Տնտեսագիտական Համալսարան
22. Հայաստանի Եվրոպական Համալսարան
23. «Հայաստանի հանքագործների և մետալուրգների միություն» ԻԱՄ/ՀԿ
24. «Հայաստանի երկրաբանների միություն» գիտահետազոտական ՀԿ
25. Հայաստանի Ճարտարապետների միություն

ԳԻՏԱԺՈՂՈՎ- ՑՈՒՑԱՀԱՆԴՈՒԹՅԱՆ ԶԵԿՈՒՅՑՆԵՐԻ ԹԵԶԻՄՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐ

Գիտաժողով-ցուցադրության զեկուցման թեզիսներն ընդունվում են մինչև 2023 թվականի հուլիսի 20-ը՝ լրացնելով էլեկտրոնային հայտը՝ https://docs.google.com/forms/d/e/1FAIpQLSfgv404ZOzUaLvl5G5-qu8MdLYUOyh70_TjCRNFkxMcpBB6NQ/viewform?usp=sf_link հղմամբ, և հայտին կցելով թեզիսի նյութը՝ էլեկտրոնային տարբերակով:

Զեկուցման թեզիսներն անհրաժեշտ է ներկայացնել էլեկտրոնային տարբերակով՝ «.doc» կամ «.docx» տեքստային ֆորմատի ֆայլերով, որի անվանումը պետք է համապատասխանի 1-ին հեղինակի անվան սկզբնատառին և ազգանվանը, օրինակ՝ aazganun.doc կամ aazganun.docx:

Թեզիսների ձևավորման տեխնիկական պահանջներն են.

Թղթի չափսը՝ A4 (210 մմ x 297 մմ), լուսանցքները՝ ձախից 3.0 սմ, աջից՝ 1.5 սմ, վերևից՝ 2.0 սմ և ներքևից՝ 2.5 սմ: Տեքստը մուտքագրվում է «Յունիկոդ» (Unicode) կոդավորման համակարգի տառատեսակների կիրառմամբ: Հայերեն տեքստի տառատեսակը՝ GHEA Grapalat, ռուսերենը և անգլերենը՝ Times New Roman: Վերնագիրը և տեքստը շարվում են 12pt տառաչափով, միջտողային հեռավորությունը՝ 1.15:

Թեզիսի վերին տողի աջ մասում 12 տառաչափով տրվում է հեղինակի անունը ազգանունը: Մեկ տող ներքև՝ տողի աջ մասում, 12 տառաչափով, շեղատառ (*italic*) նշվում է կազմակերպությունը, ԲՈՒՀ-Ը կամ գիտահետազոտական կենտրոնը, ֆակուլտետը/ստորաբաժանումը, պաշտոնը, գիտական աստիճանը և կոչումը: Մեկ տող ներքև 12 տառաչափով գրվում է «Էլ. փոստ» արտահայտությունը, այնուհետև տրվում է հեղինակի էլեկտրոնային փոստի հասցեն: Մեկից ավել հեղինակների դեպքում հեղինակների տվյալները հաջորդաբար տրվում են ներկայացված պահանջներին համապատասխան:

Մեկ տող բաց թողնելով՝ տողի կենտրոնում, 12 տառաչափով, թավ (**bold**) և գլխատառերով գրվում է թեզիսի վերնագիրը:

Մեկ տող բաց թողնելով, թավ և շեղատառ, գրվում է «**Բանալի բառեր**» արտահայտությունը, այնուհետև շեղատառ (*italic*) տրվում են աշխատանքին վերաբերող 7-ից մինչև 10 բանալի բառ:

Մեկ տող բաց թողնելով՝ շարադրվում է թեզիսի հիմնական տեքստը: Տեքստի պարբերությունները պետք է հավասարեցված լինեն երկու կողմերից: Նոր պարբերությունը պետք է սկսվի 1 սմ խորքից, առանց «տաք»-երի կիրառման: Թեզիսի բուն նյութի ծավալը պետք է պարունակի առնվազն 250 բառ և չգերազանցի 500 բառը, պետք է պարտադիր նշվի աշխատանքի գիտական նորույթը և շարադրված լինի աշխատանքի գլխավոր արդյունքները, առանց հղումների:

* Աշխատաժողովի Կազմկոմիտեն իրավունք ունի չընդունելու այն նյութերը, որոնք չեն համապատասխանում աշխատաժողովի հայտերի և թեզիսների ներկայացման ձևաչափին ներկայացվող պահանջներին ու թեմատիկային:

** Թեզիսների ներկայացման պահանջներին և թեմատիկային համապատասխան կազմկոմիտեի կողմից ընդունված նյութերը կտպագրվեն աշխատաժողովի թեզիսների ժողովածուում:

** Լավագույն աշխատանքները կարող են ներկայացվել տպագրության «ՀՀ ԳԱԱ Տեղեկագիր Գիտություններ Երկրի մասին» հանդեսում, հեղինակների կողմից սահմանված պահանջներին համապատասխան հոդվածների ներկայացման և գրախոսման դեպքում:

- Աշխատանքային լեզուն՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն, չինարեն:
- Զեկուցման տևողությունը՝ առավելագույնը 10 րոպե, ներառյալ հարցերի համար նախատեսված ժամանակահատվածը:
- Զեկուցման ելույթի սահիկաշարը պատրաստել MS PowerPoint ծրագրի «.pptx» ֆորմատի ֆայլով, էկրանի չափերը՝ Standart (4:3), Landscape, լայնությունը՝ 25.4 սմ, բարձրությունը՝ 19.05 սմ: Առավելագույնը 15 սահիկ:
- Զեկուցման սահիկաշարերի կազմկոմիտե ներկայացման վերջնաժամեկտրը՝ 2023 թվականի օգոստոսի 1-ը ներառյալ: